Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հուլիսի 20 -ի N 412 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Էներգախնայողությունը ապահովելու նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Տիչինայի փող., 3-րդ նրբ., 2 հասցեում գտնվող «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և «Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քռասնիի համայնքային կենտրոնի և դպրոցի տանիքներին այլընտրանքային արևային (ON GRID) ֆոտովոլտային կայանների տեղադրում:
2.	Ծրագիրը բարեգործական որակելու նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երեւան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Հայաստանի Հանրապետություն Երևան քաղաք, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, Նոյեմբերյան քաղաք և Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քռասնի համայնք. բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 10,301,359 դրամ, որից Երևան քաղաքի Տիչինայի փող., 3-րդ նրբ., 2 հասցեում գտնվող «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության տանիքին ֆոտովոլտային կայանի տեղադրում՝ 2,406,120 դրամ,

		Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի տանիքին ֆոտովոլտային կայանի տեղադրում ՝ 4,138,000 դրամ և Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քռասնիի համայնքային կենտրոնի և դպրոցի տանիքին ֆոտովոլտային կայանի տեղադրում ՝ 3,757,239 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն և Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քռասնիի համայնքային կենտրոն և դպրոց
8.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագրերը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունում՝ 2020 թ. հուլիսի 13-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 14-ը, Տավուշի մարզի «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ»-ում՝ 2020 թ. հուլիսի 13-ից մինչև 2020 թ. սեպտեմբերի 14-ը և Ասկերանի շրջանի Քռասնիի համայնքային կենտրոնում և դպրոցում՝ 2020 թ. հուլիսի 13-ից մինչև 2020թ. սեպտեմբերի 14-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Տիչինայի փող., 3-րդ նրբ., 2 հասցեում գտնվող «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ-ի և «Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քռասնիի համայնքային կենտրոնի և դպրոցի տանիքներին այլընտրանքային արևային (ON GRID) ֆոտովոլտային կայանների տեղադրում. արժեքը՝ 10,301,359 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Այլընտրանքային (ON GRID) ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ 10,301,359 դրամ
11.	Ծրագրի իրականացման կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական	Համագործակցություն չի նախատեսվում:

	ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ